

«Հիւսիսային Ափրիկէի խռովութիւնը
նպաստաւոր չեն հայկական բարենորոգ-
մանց, բայց կրնանք յուսալ թէ երբ ներ-
կայ տաճնապն անցնի, Վեհ. Առլթանին
է կառավարութիւնը լրջօրէն ձեռք պիտի
է առնէ այս (բարենորոգմանց) կենսական
գործը: Բայց դոնէ կրնանք գոհ լինիլ մը-
տածելով որ եթէ այս գործ անցաջող եղնէ,
Անգլիական գեապանին յանցանքովն անյա-
ջող ելած չը պիտի լինի: Ամեն ոք գիտե-
թէ Լորտ Տիւֆթըրին Կ. Պօլիս գալէն ի վեր
կրճածին չափ աշխատած է Արեւելեան ար-
դի սահմանափակ խնդրոյն այդ «նորոգ-
ման»-ին, և պէտք չէ կարծել թէ նա
(գեապանը) ձեռնիմափ պիտի լինի մինչև
որ բան մը չը կատարուի անհետացնելու
համար իրաց փասնագից վիճակ մը: Ժա-
մանակը գեա չէ եկած բարենորոգմանց ա-
բողջ ծրագրոյ մը գործադրման համար
բայց կատարուելիք առաջին անհրաժեշտ
ձեռնարկութիւնք բացայայտ են: Բ. Դուր
պէտք է նշանակէ ձեռնհաս կառավարիչ մը
(ո՞ր ա ի զի հ ա մ ար), և պաշտօնի վրայ
պահէ գայն մինչև որ աւարտէ իւր գործն
եթէ այսչափը կատարուի, քննադատը կրնայ
եռանէն գալ, և հաստատուելիք ճիշդ կա-
մաւորութեան վրայ յետոյ կարելի է եր-
կարօրէն խորհիլ: Ըսենք անցողակի, հա-
ւանական չէ որ իրանեան հայ հայրենաս-
րաց չափազանց պահանջմունք, զորս կը
ներկայացնէ Պ. Յակոբեան մեր այս առ-
թուով հրատարակեալ նամակին մէջ, զի
Լիբանանի և Արմենիոյ միջև քիչ նմանու-
թիւն կայ: Լիբանան հո՞ծ բնակիչ ունեցող
ը գաւառ մ'է աշխարհագրական որոշ սահ-

մաներով. մինչ հայք ցրուեալ են ընդարձակ երկրի մը վրայ, զանազան օտար ցեղերու մէջ: Բայց հայք արժանի են վարչական լաւագոյն դրութեան մը, որ ստուգիւ պիտի հաստատուի վերջապէս: (Թայմը կը վերջացնէ ակնարկելով Լորտ Տիւֆըրլինի դիւանապետական ճարտարութեան և համակիւ կարողութեան, որք մեծապէս պիտի նպաստեն եղբ բաղձացեալ նպատակին իրականացման):

(Մասիս)

Կ. ՊՕԼՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Ազգային ժողովն այսօր ի նիստ գումարեցաւ Ղալաթիոյ եկեղեցին ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և առեւ նապետութեամբ Յ. Մէրիէմ—Վուլի Էֆէնտի:

Ժամ 4-ին առեանը բացուեցաւ ի ներկայութեան 48 երեսփոխանաց: Նախորդ նիստերու առեւնադրութեանց վաւերացումն յետաձգեցաւ ժամանակն ուշ լինելուն պատճառաւ:

Փափագեան Ստեփան Էֆէնտի հարցադրուի մ'ըրաւ Պատրիարքարանէն ելած վիճակագրութիւններու վրայ, որոց մէջ Հայաբնակ գաւառաց բնակչաց թուոյն վրայ հակասութիւնը կը տեսնուին, և առաջարկեց որ Ս. Պատրիարք Հայրն համարաւորութիւն ընէ Հայրական խնդրոյն նկատմամբ:

Սոյն հարցապնդման և առաջարկութեան ի պատասխան Ս. Պատրիարքը ծանր անկարգութիւններ ըրաւ փափագեան Էֆէնտիի դէմ, նա ալ վշտանալով առաւ քաղց: Ս. Պատրիարքն յայտարարեց ժողովին թէ փափագեան Էֆէնտիի ըրած հարցապնդումն և առաջարկութիւնն ամբաստանութիւն են իրեն դէմ, և թէ ժողովին պարտքն էր իւր հրաժարականն ընդունիլ, և այլն, և այլն, և մեկնեցաւ ժողովէն:

Ասոր վրայ յուզմունք ելաւ ժողովին մէջ և երեսփոխանք մէկ ժամու չափ միմեանց հետ վիճելէ յետոյ, Ատենագետ Էֆէնտիին օրակարգին անցնել ուզեց, բայց ժամանակն անցած և երեսփոխանաց մեծ մասն հետգհեալ մեկնելու վրայ լինելով, առեանը փակեցաւ ժամ 5 3/4-ին:

(Մասիս)

ՄԻ ՅԱՒՈՎ ՊԱԿԱՍ

«Մասիս» լրագրում կարդում ենք հետեւեալը:

«Գաթնութեամբ կը ծանուցանեմք թէ կաթողիկոսական յանձնախումբն երէկ Ամեն. Տ. Մկրտիչ կաթողիկոսին տունն երթալով, իւր պատրաստած ծրագրին վրայ բանակցեցաւ Ն. Բարձր. Սրբապետութեան հետ:

«Այս բանակցութիւն չորս ժամ տեւեց, որոյ միջոցին երկուստեք եղած առարկութիւնք լիովին բացատրուելով՝ վերջապէս համաձայնութիւն զոյացաւ և Ս. կաթողիկոսն ընդունեց յանձնախմբին պատրաստած ծրագիրն:

«Յետ այնորիկ Յանձնախումբը Ս. կաթողիկոսին մայրաքաղաքէն մեկնելու գրոյցը մէջ բերելով՝ պզտուցեց Ն. Սրբապետութեան թէ մինչև խնդրոյն պաշտօնապէս աւարտուի, իւր ի մայրաքաղաքս ներկայութիւնը կարեւոր էր: Ն. Սրբապետութիւնն այս կէտի վրայ ալ համաձայնելով՝ յանձնախումբին անդամներն ի ճաշ հրաւիրեց, որոյ միջոցին փոխադարձ բաժակներ առջարկուեցան Ս. կաթողիկոսին և յանձնախմբին անդամաց կողմէ: Յետոյ Ս. կաթողիկոսը բաժակ առաջարկեց փան կնիաց Տ. Գեորգիայ վեհ. կաթողիկոսի ամենայն հայոց և Տ. Ներսէս Ս. Պատրիարքի հայոց Թուրքիոյ:

«Այսպէս յաջողութեամբ վերջացաւ յանձնախմբին բանակցութիւնը Ս. Տ. Մկրտիչ կաթողիկոսին հետ:»

Սորանից պարզ երևում է, որ կրիկիայի կաթողիկոսը միշտ պատրաստ է եղել խաղաղ կերպով զործը վերջացնել, եթէ միայն ազգային ժողովը ուշադրութիւն դարձնէր իր անելիքներին վրա: Յուսով ենք, որ այս օրինակը խրատ կը լինի ազգային ժողովին ոչինչ լուրջ ազգային հարց զանցառութեան մէջ չը լծողնելու համար:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՑԻԱՅԻՅ

Կ. Պօլսո, 17 հոկտեմբերի

Անցեալ նամակով փոքր ինչ հասկացողութիւն տուցի Ներսէս պատրիարքի ունեցած համոզմունքի վրա հայկական հարցի լուծման ներկայումս, բայց նորա հետ ունեցած այդ տեսակցութեան ժամանակ, ինչպէս ասեցի նախընթաց նամակում, շատ ուրիշ հարցեր են շուտփոքանում: Այդ տեսակցութեան ժամանակ, պատրիարքը յայտնեց ինձ քմծիծաղ կերպով, թէ Ստեփան փափագեան անուն վատ արարածը ինձ վրա գանգաւ է տուել ազգային ժողովի դատաստանական վարչութեան «Մշակի» մէջ իրան խայտառակելու համար: «Ուրեմն Ներկայումս անանք մատամբ հաւաք իր նպատակին, սրբադան», ասեց պ. Յարութիւն Բէշքէկեանը, որը ընկերակցեց ինձ պատրիարքի մօտ—«Ենչպէս» հարցրեց Ներսէսը: «Այնպէս, որ ձեր դէմ այսչափ վատութիւններ անող անեքս արարածին աջնեղ հարցրեց, որ նորա մէջ անգամ ամօթխածութեան և պատճառաւորութեան նշույլ երեւաց...» Ներսէսը ոչինչ չասեց, միայն փոքր ինչ խնդալու պէս ցոյց տուաւ իրան. յետոյ, քիչ պտուղ անելով, պատրիարքը ասեց. «Որչափ էլ իմ անձին գէմ վատ վարվող մարդիկ են եղել, ես նոցանից ոչ մէկին ինձ թշնամի չեմ նկատել, որովհետեւ ամենքին միշտ բարիքով եմ միայն պատասխանել. իսկ նոքա որոնք իմ դէմ յարձակվելով որչափ ինչ վնաս են բերած հայկական հարցին, դաւադրութիւններ կամ մատնութիւններ անելով, աղբալիներն դատաստանը ես խնդրած եմ միայն այն նախախնամութիւնից, որը եղել է սոսկ հայոց անտեր ազգի օգնականը...» Այս խօսքերը արտասանելիս պատրիարքը փոխեց իր պօզայի հանգստութիւնը և զօրավիզ դիրք առնելով, աջ ձեռքով ուժգին ժեստ արեց:

Ուրեմն սորանից կարողացանք նկատել, որ Ստեփան փափագեանը այն վատ մտղաներիցն էր, որի անունը միայն տալիս վրդովում էր մի այնպիսի ներդրամիտ և վեհաճող մարդու ըզրգայմունքը, ինչպէս Ներսէսն է: Հազիւ կարողացայ մտազնութեան տալ այդ գարշելի և գետնաբարձ կակին, որ այսօր նորից կարգացի Ս. Սիսի մէջ և լսեցի ազգային ժողովի մէջ ներկայ գտնված մի արժանահաւատ մարդուց, այն սկանզալի մօտին, որ արեւ է Ստեփան փափագեանը, յարձակվելով պատրիարքի վրա իրան ներկայութեան ժամանակ, որից յետ երկայնամիտ Ներսէսը անգամ էլ կորցնելով համբերութիւնը, ստիպված է գտնվել «Ժուռ ակնարկութիւններ» անել իր վատագոյն և ցեխտու հակառակորդի դէմ: Կարելի է արդեօք, որ Ներսէսը չը հիւանդանայ և չը հեռանայ Եւրօպա, երբ մի կողմից նորան ոչ մի կուպէկ անգամ օգնութիւն անող չը կայ, իսկ միւս կողմից էլ փափագեանի նման բազմախնդիրները միշտ թըշնամութիւններ են անում և վիրաւորանք հարցնում պատրիարքի սրտին նորա համար միայն, որ այդպիսի բազմախնդիրներին համար պատրիարքը չէ կարողանում գտնել եղաւի և փողաւի պաշտօններ:

Երեւակցեցէք այս մարդու ինչ լինելը. մի քանի տարի առաջ նա շինում է այստեղի ուսումնարանի համար հայոց պատմութեան մի դասագիրք (էլ հասկացե՛ք թէ այստեղի ուսումնարաններին բանը որտեղ է հասել). դասագրքի մէջ նա գրում է եւ այն անցքը, ինչպէս Սարգիս եպիսկոպոս Զաւախանը թուրքերից Ներսէս կաթողիկոսին: Որովհետեւ Ստեփան փափագեանի լրբութիւնից վախճում է բոլոր ազգային ժողովը, իսկ նորա հետ միասին և կրթական վարչութիւնը, վասնորոյ փափագեանի դասագրքի առաջին տպագրութիւնը ձեռաց ցրվում է ուսումնարաններին մէջ: Հերթը հասնում է երկրորդ տպագրութեան. ինչ էլ կարծում երկրորդ տպագրութիւնից էլ անհետանում է Սարգիս Զաւախանի անունը, իսկ փափագեանը այնչափ նամուս է գտնում աշխարհիս մէջ, որ ամեն

տեղ պարծենալով է առում Սարգիս Զաւախանից իր ստացած երկու հարիւր ոսկի կաշառի մասին: Գե՛հ քնն անէ այսպիսի մէկի հետ խեղճ Ներսէս պատրիարքը. նա էլ կաշառ տայ. էս հէնց շատ էլ ուզեց տալ նորա անկուշտ աչքը և պղծ սիրտը շահելու համար, բայց ս'ը տեղից գտնէ փող նորա համար, երբ օտար խեղճ բազիրներին անգամ բացի սուրճ ոչինչ չունէ տալու:

Այս տեսակ սրիկաներից են և Միացեալ ընկերութեան նախորդ տնօրէն ժողովի անդամները. մինչև հիմայ ես 40,000 լուրէւ հաշիւը չը ներկայացնելով այժմեան տնօրէն ժողովին, նորա արգելք են լինում ընկերութեան ընթացիկ գործերին և տեղեկագրին, հաշիւ ու նոր պրօգրամի յայտարարութեան: Այս նոր տեղեկագիրը, որ կը սկսվի տպագրվել, անմիջապէս նախորդ տնօրէն ժողովի հաշիւները տալուց յետ, շատ լաւ տպագրութիւն պիտի գործէ այստեղի և այդտեղի հայ հասարակութեան վրա, ինչպէս մի մեծ դօկումէնտ, որի մէջ գտնէ կարելի է տեսնել թէ ինչ է արել մինչև հիմայ Միացեալ ընկերութիւնը և ինչպէս պիտի գործէ այսուհետեւ: Մի քանի դիտողութիւններ արեցի այդ տպագրվելի տեղեկագրի մասին պ. Մ. Չեւրաքին, որը կատարեալ հաւանութիւն տալով, խոտապաւ իրագործել:

Նախորդ տնօրէն ժողովը, որի ներկայացուցիչներն են յայտնի անձինք, այն ազգատէրները, որոնց գովված ազգասիրութիւնը միայն այնչափ եղաւ, որ Հայաստանի որբերի վրա մի քանի հազար ոսկի նստեց, չունենալով էլ ուրիշ յենակէտ, սկսել են պարագլխի հիմայ մի վարժապետական հարցով: Այստեղի լրագիրներին մէջ էլ այնչափ յանդգնութիւն ունեն, որ յայտնում են թէ այդ հարցը նոքա պաշտպանում են Մշակի «պրինցիպլ անունով»: Այնք հարցնէ սոցա թէ՛ ո՞վ իրանց իրաւունք տուաւ խօսել Մշակի պրինցիպլի կողմից... Ահա այսպէս են սոքա. այնչափ լիւր են, որ ոչինչ միջոցներն առաջ յետ կանգնել չը գիտեն. մի կողմից «Սօսիւն» և «Վենիչ» ստորագրութեան գրում են այդտեղ «Մշակի» դէմ, իսկ միւս կողմից էլ, երբ այստեղի հասարակութեան մէջ իրանց վարկը ցելի մէջ է ընկած, ուղում են Մշակը իրանց վաճառ բանել. կեցցէ եղուկտութիւն, որ բերեցին իրանց հետ այնչափ դեմօնարացիաներով կաթողիկոսութիւնից լուսաւորականութեան դիմելով...

«Journal d'Orient»-ը արդէն սկսել է իր գարմանքը յայտնել այստեղի հայերի ազգասիրութեան վրա. չը հասկանալով բոլորովին մի այսպիսի անտարբերութեան միասնաֆիկացիան այսչափ մի նեղ ազգային ճգնաժամի ժամանակ, խեղճ եւրօպացի սկսել է մի քանի պատուաւոր մարդիկներին նամակ գրել, հարցնելով ամենայն անկեղծութեամբ թէ արդեօք անհաճոյ է Կ. Պօլսի ազգասէրներին, որ «Journal d'Orient»-ի խմբագրութիւնը այսչափ էնէրգիայով հայոց դատի պաշտպան է և կանգնում Եւրօպայի առաջ: Ահա այստեղ էլ հասաւ բանը, ուրեմն մի կողմից ուրախ եմ, որ իմ բոլոր գրածներս ճշմարտութիւնը կ. պոլսեցոյց ազգասիրութեան մասին, փորձով էք տեսնում: Նոյնը չէ միթէ և այդ տեղի մի շատ չըջանկատ ազգային լրագրի» կողմից, որը ուրիշներին քարոզ է կարգում թէ՛ հայոց հարցով է հարկաւ, որ պարագլխէ. իսկ ինքը մինչև հիմայ եւ մի հատ ծակ կուպէկ էլ չէ ուղարկել հայոց հարցի միակ փաստաբան «Journal d'Orient»-ի խմբագրութեան: Լաւ առաջ կերթայ հայոց գործը երբ խմբագիրներն անգամ միայն նիստի ազգասիրութեամբ կը պարագլխեն...

Նոր ձեռքով ընկաւ Ֆրանսերէն լեզուով նոր տպագրված օսմանեան պատմութիւնը, որի մէջ հայոց նորագոյն շարժումներին շատ ընդարձակ տեղ է տրված: Արժանահաւատ մի անձ ինձ ասեց, որ այդ բարեբաղ պարտական երբ պ. Սիւ. Չեւրաքին, որի թելադրութեամբ է գրած հայոց մասին մեծահասար գրքի հեղինակ պ. vicomte de la Jonquiere. Իսկ գրքի վերնագիրն է. Histoire de l'Empire Ottoman depuis ses origines jusqu'au traité de Berlin. Եթե խմբում է փարկում պ. Hachette-ի գրաժառանգողում: Այսպիսով հայոց մասին իւրաքանչիւր ազնիւ մարդ պիտի պաշանդ է անում, որչափ կարող է, միայն հայերն են, որոնց սիրտը միշտ քար է, միշտ անշարժ. թող կործանվեն այդպիսիները, որ գտնէ նոցա յուսով չապրեն մնացած հայերը...

Ուղարկում եմ ներփակեալ թայմսի մի մեծ և հետաքրքիր առաջնորդող յօդուածը հայոց մասին:

Գրիգոր Նիկողոսեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 հոկտեմբերի: Թող տուած է ընդունել արքունի հաշուով Անդրկովկասեան իգական ինստիտուտը երկրում ծառայած քաղաքական և գիտութեան պաշտօնականների աղջիկներին Հոկտեմբերի 19-ին էկսպէրաները անպայման վճռեցին արգելել հրէայ-տալմուդիստներին խմբէրների մանրավաճառութիւնը աւաններում և քաղաքներում: Լուր կայ որ Պետական Խորհուրդը վճռեց ցածացնել յետգնողական վճարումները հաւասարապէս ամբողջ պետութեան մէջ: Հոկտեմբերի 29-ին սենատի մէջ նշանակված է Միսակի նահանգապետի իր պաշտօնի մէջ արած գեղծութիւնների քննութեան գործը: Լուր կայ որ դիտաւորութիւն կայ նշանակվել սենատային ընկերակցութեան գործի երկրի մէջ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 հոկտեմբերի: Հոկտեմբերի 20-ին Մոսկվայում բացված է պետական հիմնարկութիւնների (?) ներկայացուցիչների ժողովը: «Порядок» լրագրի հեղադրին նայելով, խորհում էր դիտաւորութիւն կայ տնտեսագիտական ինստիտուտի տեղ բանալ աւելի մի գործնական դրպրոց, այն է բազմաբուսական դպրոց, հանքարանական բաժնով: Խորհում է բացվում է հանքարաններին փոխարարձ կրկնութի բանկ: Միսակտի յանձնաժողովը որոշեց պահպանել բանկէլի սիստեմը մի քանի աննշան փոփոխութիւններով: Միսակտի պետացիաների պարագլխերը ազատ է մնում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 հոկտեմբերի: Խորհրդակցական առեանը եկաւ այն եզրակացութեանը, որ վարչական ձեռքով աքսորվածներից շատերին, նրանց երկրորդական մանակեայ քաղաքը աչքի առաւ ունենալով կարելի է անպարպ ազատել: Բարձրագոյն թող տուած է հսկողութեան տակ գտնված անձանց, որոնց վիճակը արժանի է թեթեւացնելու, ազատել: Էկսպէրաները հոկտեմբերի 22-ին վճռեցին. գէմաւորների աշխատանքներին, խմբիքների գործում, ակցիլի պաշտօնականներին թող տալ մանակցել, խաղաղութիւններին չը ծանաչել: Նահանգապետական բողոքները խմբիքների գործում համարել անտօր երկայններ: «Норме Време» լրագրի հարցով է. երկաթուղեան յանձնաժողովը առաջարկում է վերաբնակ ճանապարհների կանոնադրութիւնները, որոնք պահանջում են աւելորդ վճարներ ապահովութեամբ, յատկացնելով նրանց պետական վարչութեանը, միացնել ընկերութիւնը ընդհանուր վարչութեան տակ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 հոկտեմբերի: «Норме Време» լրագրի հարցով է որպէս լուր, որ Տրիգոնի գործը նշանակված է նոյնիսկ երկրորդ կէտին. մեղադրվածները 22 են: Նոյնիսկ առաջին կէտին նշանակված է Էնդէլգարդի և ուրիշների գործը փող վառնելու առիթով: — Ձինւորական յանձնաժողովը հոկտեմբերի 23-ին գլխուրական միջնատրութեան իշխանութեան ապակնարանացման հարցում եկան այն եզրակացութեան, որ հարկաւոր է շրջանների և կորպուսների գլխուորներին մեծ ինքնուրոյնութիւններ շնորհել: Ֆիլոսոֆիայի առաջին առնելու համար ժամանակաւորապէս արգելված է խաղողի մուտքը Սև ծովի միջով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 հոկտեմբերի: Պետական բանկի 50% տոմսով առաջին շրջանի արժէ 95 ռ. 25 կ., երկրորդ 92 ռ. 12 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 92 ռ.: Ներքին առաջին 50% փոխառութեան տոմսով արժէ 220 ռ. 50 կ., երկրորդ 215 ռ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսով արժէ 90 ռ. 37 կ., երկրորդ 90 ռ. 37 կ., երրորդ 90 ռ. 37 կ., ոսկի 7 ռ. 67 կ.: Լուսաց 1 ռ. Լոնդոնի վրա արժէ 25,69 պէնս, Ամստերդամի վրա արժէ 129,50 պէնս, Լուսաց 100 ռ. փարկի վրա 271 փրանկ:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԴՐՈՒՆԻ